ՀՀ Գեղարքունիքի մարզի Դարանակ համայնքում կառուցվող <<Դարանակ>> ՓՀԷԿ աշխատանքային նախագծի հասարակական Լսումների վերաբերյալ

## Արձանագրություն

30.նոյեմբերի 2012 թ ՀՀ Գեղարքունիքի մարզ
գ. Դարանակ

Ս/թ նոյեմբերի 30-ին Դարանակ համայնքում տեղի ունեցավ <<Ագրոսպասարկում>> Ս/Մ Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ-ի կողմից ներկայացված <<Դարանակ>> ՓՀԷԿ-ի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Մասնակցում էին <<Դարանակ>> համայնքի ղեկավար Վ.Սարկիսյանը, գյուղապետարանի աշխատակիցները, համայնքի բնակիչները, <<Ագրոսպասարկում >> Ս/Մ Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ-ն տնօրեն՝ Հ.Հարությունյանը , ՀՀ բնապահպանության նախարարություն <<բնապահպանական փորձաքննություն>> ՊՈԱԿ-ն փորձագետ Հ.Մկրտչյանը

1. <<Ագրոսպասարկում>> Ս/Մ Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ-ի տնօրեն՝ Հ.Հարությունյանը ներկայացրեց Դարանակ ՓՀԷԿ-ի աշխատանքային նախագիծը, ջրաէներգետիկ ցուցանիշները, պատասխանեց ներկա գտնվող մասնակիցների կողմից առաջադրվող հարցերին: Հարցերը հիմնականում առնչվում էին Դարանակ ՓՀԷԿ-ի շահագործման և շինարարության փուլերում Դարա գետում առաջացող բնապահպանական խնդիրներին :

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դարանակ համայնքի ղեկավար Վ.Սարկիսյանը կարևորելով ՓՀԷԿ-ի կառուցման դերն ու նշանակությունը ինչպես էներգետիկայի զարգացման, այնպես էլ համայնքի սոցիալտնտեսական իրավիճակի բարելավման գործում, իր մտահոգությունը հայտնեց ՓՀԷԿ-ի շահագործման փուլում, ջրի նվազման պարագայում Դարա գետի էկո համակարգի և շրջակա տարածքների պահպանության վերաբերյալ:
Համայնքի ղեկավարը նշեց որ ՓՀԷԿ-ի կառուցմանը խոչնդոտող ծառեր և թփուտներ չկան:
Բնապահպանական տարածքները (Սևան ազգային պարկը) գտնվում է գետի աջափնյա հատվածում 60 մ և ավելի հեռավորության վրա:

Կառուցվող խողովակաշարերը անցնում են երկու գետակներին զուգահեռ անցնվող քարքարոտ ճանապարհների երկարությամբ, շրջակա տարածքները հիմնականում ծածկված է փշատերև բույսերով և մացառուտներով, ծառաթփուտային բուսականության հատում չի նախատեսվում:

Խողովակաշարերի անցկացման համար նախատեսված հողատարածքները սեփականության իրավունքով պատկանում է <<Ագրոսպասարկում>> Ա/մ Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ-ն: ՀՀ Բնապահպանության նախարարության <<Բնապահպանական փորձաքննության>> ՊՈԱԿ-ն փորձագետ Հ.Մկրտչյանի կողմից առաջ քաշվեց գետում առկա ձկնատեսակների և գետը որպես ապրելավայր կամ ձվադրավայր հանդիսանում է թե ոչ:

Հասարակական լսմանը մասնակիցների կողմից բերվեցին տեղեկատվություններ, որ գետում չկան ձկնատեսակներ և երբեվիցե չեն տեսել հիմնավորելով այն փաստը, որ գետը Սևանա լիճ հասնելու հատվածում ջուրը ցամաքում է կրելով ստորգետնյա բնույթ, որտեղով ձուկը չի կարող բարձրանալ գետը և բնադրվել, չնայած, որ Ագրոսպասարկում Ա/մ Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ-ն կողմից ներկայացվեց, որ աշխատանքային նախագծում նախատեսված է ձկնանցք կառույցներ:

Հասարակական լսումների ընթացքում համայնքի բնակիչների կողմից առաջ քաշվեցին համայնքի սոցիալական հատկացումների վերաբերյալ հարցերը:

Որոշեցին

1. Հավանության տալ Դարանակ ՓՀԷԿ-ի կառուցման աշխատանքային նախագծին

ՀՀ Գեղարքունիք մարզի
Դարանակ համայնքի ղեկավար՝ Վ.Սարկիսյան

<<Ագրոսպասարկում>> Ա/մ
Վարդենիսի շրջանային միավորում
ԲԲԸ տնօրեն՝ Հ.Հարությունյան

Բնապահպանական փորձաքննություն
ՊՈԱԿ փորձագետ՝ Հ.Մկրտչյան

Դարանակ համայնքի ավագանու անդամ՝ Ա.Թադևոսյան

Դարանակ համայնքի բնակիչներ՝ Շ.Գրիգորյան

Մ.Մանուկյան

Ս.Աթոյան

Ս.Հովհաննիսյան

Հասարակական կառույցների ձևավորման ԵԿՀ համայնքի բնակիչներս թվով 26 մարդ: Մեր-
ներկայացուցիչը ընտրում ենք հանձնարարությամբ
ՀԵԿ-ի կառույցների աշխատանքներին:

1. Գևորգյան Հայկ
2. Գրիգորյան Շահեն Գ.Շ.
3. Սարգսյան Վլադիմիր
4. Գևորգյան Դանիել
5. Կարապետյան Սարիկ
6. Գևորգյան Կարապետ
7. Աբոյան Արթուր
8. Հովհաննիսյան Եղիազար
9. Մանուկյան Մարտին
10. Հովհաննիսյան Սամվել
11. Հովհաննիսյան Սոնա
12. Գալստյան Հայկազ
13. Աղաբաբյան Աշոտ
14. Սարգսյան Ռաֆիկ
15. Սարգսյան Մերի
16. Ավագյան Կարեն
17. Թամազյան Արարատ
18. Թամազյան Կարապետ
19. Գրիգորյան Ժենյա
20. Մելքոնյան Սուսաննա
21. Ավագյան Հարություն

22. Սարգսյան Աշխեն [signature]

23. Գևորգյան Սամվել [signature]

24. Սարգիսյան Փիրուզա [signature]

25. Մանուկյան Անահիտ [signature]

26. Հարությունյան Հայկ [signature]

27.

Դասարանը հանձնեց

Ղեկավար՝ [signature] Հ. Սարգսյան

08801431

<< ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱՆԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հռ - 164

30 . 11 2012թ

ՀՀ Բնապահպանության նախարարության
<<Բնապահպանական փորձաքննություն>>
ՊՈԱԿ տնօրեն՝ Ա.Գևորգյանին

Ձեր 22.11.2012թ թիվ ԱԳ 33/519 գրությանը պատասխանում ենք, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Դարանակ համայնքում կառուցվող <<Դարանակ>> ՓՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ առարկություններ չունենք:
<<Դարանակ>> ՓՀԷԿ-ի շինարարական աշխատանքների ժամանակ ծառաթփուտային բուսականության հատում չի նախատեսվում, տարածքները Սևան ազգային պարկի տարածքներից գտնվում է 60 մ և ավելի հեռավորության վրա:

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Դարանակ համայնքի ղեկավար՝ Վ.Սարկիսյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱՆԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Նո 163

30.11 2012թ

ՀՀ Բնապահպանության նախարարություն
<<Բնապահպանական փորձաքննություն>>
ՊՈԱԿ տնօրեն՝ Ա.Գևորգյանին

# Տեղեկանք

ՀՀ Գեղարքունիքի մարզի Դարանակ համայնքում կառուցվող <<Դարանակ>> ՓՀԷԿ-ի հողային աշխատանքներից առաջացած մնարցորդային հողային զանգվածները կօգտագործվեն համայնքի արոտավայրեր և խոտհարքներ տանող ճանապարհների հարթեցման համար, իսկ շինարարության արդյունքում առաջացած աղբը կտեղափոխվի համայնքի համար նախատեսված աղբավայրում, որը գտնվում է համայնքից 1000 մ հեռավորության վրա:

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Դարանակ համայնքի ղեկավար՝ Վ.Սարկիսյան